9—10-րդ դարերի պատմիչների քաղաքական նպատակադրությունը» թեմայի շուրջը զեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս Հ. Օրբելին։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Ճահինյանը կարդաց զեկուցում «Նորագույն սովետական գրականության մի քանի հարցերի մասին» թեմայի շուրջը։ Բաժանմունքի նիստին Հայաստանի հնագիտական պեղումների արդյունքների և հնանկարների մասին զեկուցեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Պիոտրովսկին։ Ունկնդիրների մոտ մեծ հետաքրքրություն առաջացրեց Գառնիի հնագիտական պեղումների արշավախմբի պետ, պատմական գիտությունների թեկնածու Բ. Առաքելյանի հաղորդումը՝ Գառնիում վերջերս գտնված հնագույն մոզաիկայի մասին։ Այդ մոզաիկայի գունատիպ պատճենն բնական մեծությամբ ցույց տրվեց հանդիսականներին։

Նոյեմբերի 25-ի Հասարակական գիտությունների բաժանմունքի եզրափակիչ նիստում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գ. Ղափանցյանը կարդաց զեկուցում «Պալա լեզուն» թեմայի շուրջը։ Հայ բարբառագիտության հարցերի շուրջը զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ղարիբյանը։ «Ամերիկյան իմպերիալիզմի և նրա գործակալների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի պատմությունից» թեմայի մասին զեկուցում կարդաց պատմական գիտությունների թեկնածու Ա. Մնացականյանը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հոբելյանական սեսիան ցույց տվեց, որ անցած 10 տարիների ընթացքում մեր ռեսպուբլիկայի գիտնականները մշակել են մի շարք կարևոր պրոբլեմներ և մեծ աշխատանք են կատարել ներդրելու գիտության արդյունքները ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերի մեջ։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան մտնելով իր երկրորդ տասնամյակը, ձեռնամուխ է եղել մի շարք կարևոր գիտա-հետազոտական պրոբլեմների ուսումնասիրության գործին, որոնք բխում են մեր պարտիայի Կենտրոնական Կոմիտեի Սեպտեմբերյան պլենումի որոշումների ոգուց և նպաստում են մեր երկրի գյուղատնտեսության, արդյունաբերության և կուլտուրայի հետագա և ավելի բարձր զարգացմանը։

Վ. Ք.

# ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ, ՆՎԻՐՎԱԾ ՍՈՎԵՏԱ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԻԱՄՍՅԱԿԻՆ

1953 թ. նոյեմբերի 21-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և Երևանի Մոլոտովի անվան Պետական համալսարանի համատեղ գիտական սեսիան, նվիրված սովետա-գերմանական բարեկամության միամսյակին։ Սեսիայի հանդիսավոր նիստին մասնակցեցին Հայաստան հյուր եկած գերմանա-սովետական դելեգացիայի անդամները։ Ներածական խոսքով սեսիան բաց արեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Մ. Ներսիսյանը։ Պատասխան ճառով ելույթ ունեցավ գերմանական դելեգացիայի ներկայացուցիչ պրոֆեսոր Կինաստը։ Այնուհետև կարդացվեցին հետևյալ զեկուցումները. 1) Գերմանական կլասիկ դրամատուրգիան հայ բեմի վրա։ Զեկուցող՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Ստեփանյան։

2) Աննա Զեգերսի վեպերը։ Զեկուցող՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Լ. Պետրոսյան։

3) Իոհաննես Բեխերի ստեղծագործությունը։ Զեկուցող՝ դոցենտ Բ. Ցուդրաշյան։